ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մարտի 2019թ. թիվ 82-Ա

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ- ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2018 թվականի գործունեության արդյունքների ամփոփման ժամանակ արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների պլան-ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝ միջոցներ ձեռնարկել սույն որոշման հավելվածում սահմանված միջոցառումների իրականացման ուղղությամբ և սահմանված ժամկետներում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչություն:

3. Սույն որոշմամբ հաստատված պլան-ժամանակացույցի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետին:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մարտի 12
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. մարտի 12-ի
թիվ 82-Ա որոշման

ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ ը/կ	***Հանձնարարականներ և առաջարկություններ***	***Պատասխանատու***	***Կատարողներ***	***Կատարման ժամկետը***	***Նշումներ***
1	***2***	***3***	***4***	***5***	***6***
1.	Համայնքների ջրամատակարարման համակարգի ցանցի վրա անհրաժեշտ հակահրդեհային ջրածորանների (հիդրանտների) կամ այդ նպատակի համար մոնտաժված լցավորող ծորակների տեղադրում և շահագործում: Չգործող հրշեջ-հիդրանտների վերանորոգում	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Համայնքների ղեկավարներ	Տարվա ընթացքում	
2.	Մարզի կապի և ազդարարման համակարգի արդիականացում՝ էլեկտրական շչակների ձեռք բերում, անսարքների վերանորոգում, դրանք կենտրոնացված ազդարարման համակարգին միացում	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Համայնքների ղեկավարներ	Տարվա ընթացքում	
3.	Ախթալա, Դսեղ, Մեծավան և Մեծ Պարնի համայնքներում հրշեջ-փրկարարական հենակետերի ստեղծման վերաբերյալ գործնական առաջարկությունների ներկայացում	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Ախթալայի, Դսեղի, Մեծավանի և Մեծ Պարնու համայնքների ղեկավարներ	Մինչև 01.06.2019թ.	

4.	Համայնքների աղետների ռիսկի կառավարման պլանների մշակում	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Համայնքների ղեկավարներ	Մինչև 01.12.2019թ.	
5.	ԱՌԿ պլանավորման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում (համայնք, դպրոց, նախադպրոցական ուսումնական հաստատություն)	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Յուրաքան-չյուր եռամսյակ	
6.	Գործող ԱՌԿ պլանների վերանայման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում՝ (նշելով նաև ԱՌԿ պլանների միջոցառումների արտացոլումը զարգացման ծրագրերում)	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Համայնքների ղեկավարներ	Տարին մեկ անգամ	
7.	Համայնքների զարգացման ծրագրերում և համայնքային բյուջեներում աղետների ռիսկի կառավարման բաղադրիչների ու միջոցառումների ընդգրկում	Լոռու մարզպետի տեղակալ, Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Համայնքների ղեկավարներ	Մինչև 01.12.2019թ.	
8.	Աշխատանքներ տանել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգերի հստակեցման ուղղությամբ: Ձեռնարկել միջոցառումներ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի անվտանգության վկայագիրը թարմացնելու ուղղությամբ	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	Մինչև 01.06.2019թ	
9.	Ներկայացնել առաջարկություններ՝ կապված «Վանաձոր-Քիմպրոմ» ՓԲԸ-ում առկա քիմիական վտանգավոր նյութերի անվտանգ պահպանման կամ տեղափոխման հետ	Լոռու մարզպետի տեղակալ	Վանաձոր համայնքի ղեկավար, Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Մինչև 01.06.2019թ	

10.	Անտառամերձ համայնքներում ստեղծված անտառային կամավոր հրշեջ-փրկարարական խմբերի կարողությունների բարձրացում	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Անտառամերձ համայնքների ղեկավարներ	Տարվա ընթացքում	

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

3/12/2019

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ